


օրինակին հետեւել, որ Եջմիածնում ստացուած գրքերը խընամքով կ'ահապանուին և ի բարին կ'գործադրուին: Երբ մատենադարանի յատուկ շինութիւնը պատրաստ կ'լինի, այն ժամանակ մենք այնուոչ կ'միացնենք վանքի գրքերը, ճեմաբանի զրքերի մասնագիտական մասը, Երիցեանի և Պատկանեանի գրադարանները, և յուսով ենք, մեզ կ'յաջողուի Պովկասի մէջ հայերէն և հայագիտութեան գրքերի ամենալրիւ մատենադարանն ունենալ:

Մեսրոպ Վարդապետ



Մայր Աթոռի մատենադարանի համար ստացուած գրքեր

1. Մատենադարանը հարստացաւ մի քանի հազար գրքերով, ընդունելով Ա. Երիցեանի գրքերը, նուիրուած Դաւիթ բէկ Աւան-Իւզըաշեանի կողմից, որի մասին յիշեցինք վերև մեր յօդուածի մէջ:
2. «Գուսան» Ա. և Բ հատորները, երկերկու օրինակ, նուէր օրիորդ Մանէ Ախլերդեանից: Գուսանքի առաջին հատորը հանգուցեալ բժիշկ Գէորգ Ախլերդեանի հրատարակած Մայեաք-Նովայ բանաստեղծի երգերի ժողովածուն է (Մոսկվա, ի տպարանի Վլադիմիրայ Գոդիէ, 1852), երկրորդ հատորը՝ «Հայ առուղնէր» ի մի է ժողովուած դարձեալ Գ. Ախլերդեանի ձեռքով, որը ստատրութեամբ նրա դուստր Մանէ Ախլերդեանի ի լոյս է ածել «Ազգագրական Հանդիսի» խմբագրութիւնը (Թիֆլիզ 1903 թ):

Ուղիղ կէս դուր է անցել առաջին և երկրորդ հատորների հրատարակութեան մէջ և երկուսը միմեանց հետ համեմատելիս, միայն պիտի ցաւել, որ իրեն հանգուցեալին չի յաջողուել սկսածը իւր ձեռով վերջացնել: Առաջին հատորը մի լաւ ուսումնասիրութիւն է, հմուտ և ըսնիմաց անձից կատարուած, որտեղ դիզեցիկ յառաջաբանին հետեւում է Թիֆլիզի բարբառի քերականութիւնը, իսկ իւրաքանչիւր երգ ունի յատուկ մեկնութիւն, բառերի և մտքերի բացատրութիւններով: Երկրորդի սկզբում համառօտ նախաբանին հետեւում է Ախլերդեանի կենսագրութիւնը, ապա աշուղների երգերը, առանց որեւէ բացատրութեան, իսկ վերջում դրուած է դժուարիմաց

և օտար բառերի բառարան (երեսներ 2+Ա—ԺԱ+1—504+505—527): Ազգագրական Հանդիսի խմբագրութիւնը, հաւասարի աղբիւրները չունենալով աշուղների կենսագրութեան մասին, հոգ էլ չի տարել հաւաքել հնարաւոր տեղեկութիւններ, որովհետեւ կամեցել է խոյս տալ «չինժու յերիւրանքներից» (?): Բայց խմբագրութիւնը միշտ աւելի կարևոր խնդիր էլ է դնց առել. այնքան չքեղ հրատարակութեան սկզբում կամ վերջում չի դրել աշուղների անուանց և նրանց երգերի ցանկը: Այդ գանցառութիւնը ուղղակի աններելի է: Գիրքը ձեռք էք առնում և չգիտէք, թէ մէջը քանի աշուղ կան, ինչ եղանակաւ են նոքա դասաւորուած և ամեն մէկը քանի և ինչ երգեր ունի: «Արարատ»-ի մէջ այդ հրատարակութեան յատուկ յօդուած կ'ենւիրուի, ուստի բաւականանում ենք այս նկատողութիւնով:

3. Յովհաննէս Թադէոսեան, «Քուչակ Նահապետի երգերը» (Թիֆլիզ, 1903, արտատպած «Լումայ»-ից, էջ 34): Բանաստեղծ Քուչակի անձի և երգերին նուիրուած մի ուսումնասիրութիւն է այս: Աշխատասիրողը գալիս է այն եզրակացութեան, որ Քուչակ Նահապետը, յայտնի «աչղ Քուչակ» անունով, ապրել է ԺԶ դարի սկզբներում, ծննդեամբ Վանի Խառակոնիս գիւղից է, իսկ կեանքի մանրամասնութիւնները անյայտ են: Նահապետը անկասկած վանական կըլլութիւն է ստացել, ս. Գիրքը և կրօնական խրատները նրա երգերի մէջ լայն տեղ են բռնում, բայց նա ժողովրդից չի կարուել, ժողովրդական «աչղ» էր, ունեցել է իւր սիրոյ առարկան, իւր եւսր, որին երգել է ժողովրդական սլարդ և հասկանալի լեզուով. Քուչակը յատկապէս այդ երգերով է փայլում և նրա այդպիսի երգերը հայ գրականութեան մէջ անսովոր երևոյթ են ներկայացնում: Թադէոսեանը խօսում է նաև Քուչակի գործածած տաղաչափութեան մասին և նրա տաղերը համեմատում Վանի և Ակնի հայ ժողովրդական երգերի հետ: Այս փոքրիկ աշխատութիւնը իւր շօշափած խնդիրներով կարող է բաւարարութիւն տալ Քուչակ Նահապետի գրուածքներով հետաքրքրուողներին և լրացնում է Ա. Զօպանեանի 1902 թ. Պարիզում «Նահապետ Քուչակի Դիւանը» վերնագրով տպած ուսումնասիրական հրատարակութիւնը *): Պ. Զօպանեանը այդ երգերից ընտրութեամբ թարգմանել է նաև ֆրանսերէն լեզուով:

4. Յաբութիւն Թումանեան, Հազարան-բլբուլ, ֆէէրիա երեք արարուածով և չորս սլաոկերով (արտատպւած «Լումայից», Թիֆլիզ, 1903, 72 էջ, գինն է 30 կ.): Գրքոյիս ուղարկուած է «Արարատի խմբագրութեան» Հեղինակը փորձել է բաւական սահուն և կոկ օտանաւորով Հազարան-բլբուլ ժողովրդական հեքիաթը թատե-

*) Համեմատիւր «Արարատ» 1902 թ. էջ 1148—1158:

րական գրութեան վերածել, որի մէջ իրեն գործող անձինքներն ենր-
կայացրել է Ռերարտուի Մաննա թագաւորին, նրա որդիներին և
սպառապաններին: Այսպիսի գրութեան մէջ բնականաբար պատ-
մութիւն չպիտի որոնել, բայց ականջի խորթ է, երբ Ռերարտուի
թագաւորը խօսում է «Հայոց աշխարհի» մասին:

5. Dr. Antonius I. Վարդապետ, Լեհաստանի հայերի
պատմութեան վերջին երեսը, թարգմանեց Մ. Բարխուդարեան (Բա-
գու, 1903 թ. դինն է 20 կ. 47 էջ): Թարգմանը գրում է. «Լեհաս-
տանի հայերի պատմութեան և Նիկոլ Թորոսովիչ եպիսկոպոսի կա-
տարած տխուր դերին նուիրուած աշխատութիւններ շատ կան: Այս
փոքրիկ յիշատակարանը, որի հեղինակը ժամանակակից էր XVII դա-
րում տեղի ունեցած այդ անցքերին, նկարագրում է մի դէպք, երբ
հայ կլինը ջերմ պաշտպան է հանդիսանում իւր մայրենի եկեղեցուն,
իւր ամբողջ էութեամբ բողոքում է եկեղեցիների միութեան դէմ, և
այդ բոլորը անում է այնպիսի անձնուիրութեամբ ու նուանդով, որ
նախանձելի օրինակ կարող է լինել և այժմ իսկ շատերի համար»:
Իսկ. Անտոնիոսի լեհական բնագրից օգտուել է Կ. Նդեանը իւր «Բանի
միութիւն Հայոց Լեհաստանի ընդ եկեղեցւոյն Հռոմայ» գրքի մէջ, իսկ
ռուսերէն թարգմանութիւնը հրատարակեց «Научное Обозрение»
1901, VI և VII գրքերում: Լեհացի հեղինակը Լեհաստանի հայերին
և իւր պատմութեան հերոսահուն ներկայացրել է լաւ գոյնեւոր, սր
կարեւի է մակարեւել հէնց գրքոյկի սկսութեանց. «Զգոյ՛շ, հեռատես,
աշխատասէր և հեղաքարոյ հայ ժողովուրդը ենթարկուած էր կրօ-
նական «մոլոյ ութիւնների», — աղանդապաշտ էր, ինչպէս այն ժա-
մանակ էին ասում»: Մենք կարգացել էինք ռուսերէն բնագիրը և
ցանկացել այն թարգմանած տեսնել, ուստի հաճոյքով ենք յիշատա-
կում ս. Բարխուդարեանի թալգմանութիւնը:

6. Հաւիւ Երեւանայ ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ երեց-
փոյս Գ. Մ. Պապովի (Երևան 1903, 24 էջ), 1902 տարուայ համար:
Պ. Պապովը երեք տարի երեցփոխանութիւն է արել Երևանի նորակա-
ռոյց եկեղեցու մէջ և տարէցատրի տակէ մանրամասն հաշիւ: Այդ գե-
ղեցիկ, ճշտապահ և մաքուր հաշուետութիւնից երևում է, — որ ս. Լու-
սաւորիչ եկեղեցուն «յրնթացս երեք տարուան Երևանայ փոքրիկ հայ
հասարակութիւնը իմ (Պապովի) ձեռքով 14,000 բուրլու չափ նուիրա-
բերել է զուտ դրամով», չհաշուած արծաթեայ և ոսկեայ անօթները, որ
հազարներ արժեն: Մի քանի չաբաթ առաջ էջմիածին էր եկել անգղիացի
ուսումնական Հառիս պրոֆեսորը, որի հետ առիթ հղաւ խօսելու
հայերի նուիրաբերութիւնների մասին, և նա բացականչեց. «Ուրեմն
հայերը չեն կորչիլ»: Երևանը յիրաւի փոքր քաղաք է, 14,000 բ.
նուիրաբերութեան մասնակցել են շատերը, և ս. Լուսաւորիչ եկեղեցու

ցին հինգերորդն է. որքան լաւ կլինէր, եթէ ունենայինք միւս եկեղեցիներէ տպուած հաշիւները և խմանայինք, թէ քաղաքի բոլոր հայերը միայն եկեղեցիներին տարեկան որքան նուէրներ են տալիս: Առաջներս դրած Հաշիւը իսկապէս ընթերցանութեան փոքրիկ գրքոյկ է, լի ուշագրաւ մանրամասնութիւններով, որոնցից ընթերցողը ականերև տեսնում է, թէ ինչ կոպէկներից և ուրլիներից է գոյացել 1903 թ. 2057 ր. 99 կ. մուտքը և ինչի վրայ ծախսուել 5142 ր. 33 կ. ելքը: Ծախքի յաւելեալ գումարը իրաւացի կերպով չի շփոթում պ. երեցփոխանին—ոչ մի պարտատէր տոկոս չի պահանջում և սպասուում է խոշոր գումար՝ բացը ծածկելու: Բարեխղճութեամբ նշանակուած են ոչ միայն դրամական ելն. նուէրները, այլ նաև բարոյական օգնութիւնները: Պ. երեցփոխանը եկեղեցուց վերացրել է գանձանակ մանգալու սովորութիւնը, աւելացրել մոմերի գները, «որը տուեց գեղեցիկ արդիւնք»: Ս. Լուսաւորչի երեցփոխանը ճշտութեամբ է հասկացել իւր պաշտօնը և սրբութեամբ կատարել այն. կցանկանայինք որ մեր երեցփոխաններից շատերը տեսնէին նրա Հաշիւը և նրա օրինակին հետեւէին:

7. Տեղեկագիր Բագուի Հայոց Մարդասիրական Ընկերութեան գործունեութեան 1902 թուին (Բագու, 1903. 60+56+36 էջ), տրւած հայերէն և ռուսերէն: Ընկերութեան վարչութիւնը, ունենալով սկիզբը 9, լրացուցիչ ընտրութեամբ՝ 12 անգամ, կազմել է 61 նիստ, խորհրդակցութեամբ, կանոնադրութեան սահմաններում, գործադրելու 368,035 ր. 40 կ. չարժական և անչարժ գոյքը: Այդ խոշոր գումարի մէջ է հաշուած ընկերութեան 115,581 ր. 37 կ. գնահատուած աշն տունը, որը այժմ գտնւում է Բագուի նահանգի ժողովրդական ուսումնարանների տեսչութեան իրաւունքի տակ և որի պատճառաւ վարչութիւնը դատ է վարում տեսչութեան դէմ: Մնացեալ գումարը կազմում են անձեռնմխելի դրամապլուխ, ստացուածք և տարեկան ընթացիկ եկամուտներ: Վերջիններս ստացուում են՝ դրամագլխի տոկոսներից, անգամավճարից, նուիրաբերութիւններից, ներկայացումներից և փոխառութիւնից՝ ունեցած դրամագլխից, բոլորը միասին 27286 — 48 կ., որը ծախսուել է՝ ա) մշտական և միանուագ նպաստ չքաւորներին, բ) ձրի ճաշարանի, գ) աշխատանքի տան, դ) դրադարան-ընթերցարանի և ե) ծառայողների ելն. ծախքերի հոմար: Ընկերութեան գործունէութիւնը ընդարձակ է և չափազանց կարևոր: Մեծ հարստութիւնից անբաժան է ծայրայեղ չքաւորութիւնը. Բագում թէև կան մի քանի հարստացած միլիոնատէրներ, դրա փոխարէն վերջին աստիճան չքաւորների և օգնութեան կարօտների թիւը միայն հայ հասարակութեան մէջ հազարներով կարելի է հաշուել: Տարեկան 27,286 ր. նպաստը, որքան էլ պատկառելի գու-

մար է, չենք կարող հիմնական օգնութիւն համարել մենք, որ անձամբ գիտենք թէ Բագոււմ կարիքը որքան մեծ է: Գրադարան-ընթերցարանը, որը ծառայում է ոչ կարօտ դասակարգին, թէև բարոյական-իրթական տնօրին նշանակութիւն ունի, ծախքի մէջ ամենայեալն տեղն է բռնում (2393 ռ. 89 կ.), վարչութեան գործունէութիւնը ուղղուած է եղել քաղցածին հաց տալու, անտունին—բնակարան, անգործին—աշխատանք, հիւանդին—ղեղ, բժշկութիւն:

Մի խիստ կարևոր հարց շատ չատերին միշտ դբադեցրել է. ինչ եղանակով օգնել կարօտեալին, որ նա չիջնի ուղեորի, ձեռք կարկառելու սովոր աղքատի դրութեան, որ ինքնապատուութեան և ինքնապահպանութեան զգացմունքը նրա մէջ չմարի: Երբ օրէցօր բաղմաթիւ խնդիրներ են մտել վարչութեան անունով, նա մեծ զբոսարութիւն և պատասխանատուութիւն է զգացել, հաշուի առնելով իւր սուղ միջոցները, խնդրատուի անձնաւորութիւնը և թէ ինչ եղանակով բաւարարութիւն տալ խնդրատուին: Վարչութեան հասկացողութիւնը օգնելու խնդրի վերաբերմամբ արտայայտուած է այսպէս. «Իդէալական դրութիւնը, որին վարչութիւնը ձգտում է, կլինէր այն, երբ բնկերութեան օգնութեանը դիմող բոլոր անձինք կարողանային ստանալ այդ օգնութիւնը այս կամ այն տեսակ աշխատանքի ձևով»: Օգնութեան այդպիսի արմատական ձևը անհամեմատ դժուար է և անհամեմատ աւելի մեծ աշխատանք է պահանջում վարչութեան անդամների կողմից, իսկ ամենահեշտը և շատ անդամ անբարոյական կերպով ազդողը, կարկառած ձեռքում մի քանի կոպէկ դնել և ճանապարհ ձգելն է: Երբ կարգում ենք մեր առաջ դրած տեղեկագիրը, նկատում ենք, որ վարչութիւնն իրապէս ձգտել է իւր հասկացողութեամբ «Իդէալական դրութեան» մօտենալու: Այդ նպատակի համար աշխատել է խնդրատուների համար աշխատանք գրտնել նախահարձակին գործարաններում, մի մասին աշխատացնել Լճկերութեան աշխատանքի տան մէջ, նոյն տեղը ձրի ճաշ տալ քաղցածներին, բնակարաններ վարձել ընտանիքների համար և միայն տնհրաժեշտ դէպքում խնդրատուի ձեռքը փող տալ իբրև սղորմութիւն:

Այս սարի փետրվար ամսին կարճ ժամանակով Բագու գլտնուելով, վարչութեան նախագահ պ. Ս. Յարութիւնեանի և մի քանի անդամների հետ աչցելեցի Լճկերութեան նոր շինութիւնը և աշխատանքի տունը, որը մինչև առաջինի պատրաստուելը վարձով կացարանի մէջ է: 1899 թուին ես պաշտօնով Բագու էի գտնուում, երբ հիմնական փոփոխութեան ենթարկուեց Լճկերութեան կանոնադրութիւնը և գործունէութեան համար նոր սահմաններ դժուեցին: Յիշեալ տարին, իբրև գործունէութեան տարի, հաշուից պիտի հանել, վարչութիւնը նոր կանոնադրութեամբ սկսեց գործել 1900 թուից:

և երբ տարւոյս սկզբին անձամբ տեսայ Ընկերութեան հաստատութիւնները, թեթեւ կերպով ծանօթացայ նրա ընդհանուր գործունէութեան հետ, որի արտաքին պատկերը «Տեղեկագրի» մէջ մեր առաջն էր դրուած, մի նոր պերճախօս փաստով աւելի համոզուցի, որ այլ և այլ կանոնադրութիւններ և սահմանումներ չեն կենդանի գործ ստեղծում, այլ միայն գաղափարին նուիրուած կենդանի մարդիկ: Ընկերութեան վարչութիւնը ոյժ և եռանդ չի խնայել, նրա աշխատութեան պտուղները ակնհերե են. նա երեք տարուայ համեմատաբար կարճ միջոցում շատ և շատ կարօտեալների կրած դառնութիւնները թեթեւացրել է և իւր «Աշխատանքի տնով», իւր «Զրի ճաշարանով», իւր «Գրադարան-ընթերցարանով» լոյս, պարտաճանաչութիւն, իրական և պատուաւոր օգնութիւն տուել կարօտեալներին: Բազուի քաղաքային վարչութիւնը, քաղաքից միանգամայն դուրս, օդասուն բարձր դիրքի վրայ, Ընկերութեան է նուիրել 14,000 քառակուսի սամէն հող, որի մի փոքրիկ մասի վրայ շինուել է երկյարկանի մի ղեղեցիկ շինութիւն—արհեստանոցի և չքաւորների հանրակացարանների համար, այդ նպատակին ծախսելով Գ. Թումայեանի ժառանգներից նուիրուած 30,000 ռուբլին: Նոյն հողի վրայ, որի տարածութիւնը շատ մեծ է և երեք ճակատը փողոցների ունի, Լ. Ա. Սերգէեւի նուիրած 10,000 ռ. ուլ շինուել են 17 սենեակներ, մի շարքի վրայ, ամեն մի սենեակ յարմարեցրած մի ընտանիքի համար: Երկու շինութիւնն էլ էական մասով պատրաստ են, և շուտով բաւական թուով չքաւոր հոյ ընտանիքներ կունենան մաքուր կացարան, առողջ օդ, աշխատելու հնարաւորութիւն:

Մենք բաւականանում ենք այսպիսի ընդհանուր տեղեկութիւն տալով Մարդասիրական Ընկերութեան ներկայ գործունէութեան մասին՝ չիչելով այլ ևս այն ղեղեցիկ վիճակագրական տեղեկութիւնները, որ աղիւսակների մէջ յայտնի դասաւորութեամբ կատարեալ պատկեր են տալիս վարչութեան ամբողջ գործունէութեան մասին, և խորհուրդ տալով շատերին անձամբ ծանօթանալ այդ տեղեկագրի հետ: Մենք սովոր ենք կասկածանքով վերաբերուել դէպի շատ բարի գործեր, անարդար քննադատել և, մի անգամ մի եզրակացութեան գալով, հեռանալ հանրօգուտ գործերից և հաստատութիւններից: Նոյն վերաբերմունքը եղել է նաև դէպի Մարդասիրական Ընկերութիւնը. ամենայն խրախուսանքի արժանի են նոքա, որ յարատեւ են և թիւր մտածման մարդկանց ցոյց են տուել կենդանի գործ, պերճախօս թուերով:

8. Մակար Եպիսկոպոս Բաղսուսաբեան, Պատմութիւն Սղուանից, հատոր Ա. (Վաղարշապատ, 1902, գինն է 1 ռ. 50 կ.). Մա-

տենադարանի համար ստացուել է երկու օրինակ: Սորա մասին գրախօսական տպուել է «Արարատ»-ի 1902 թ., էջ 1146—1148.

9. *Месропъ Теръ-Мовсесянъ*, архимандритъ и членъ братіи Әчмядзинскаго монастыря, *Исторія перевода Библии на армянскій языкъ* (СПетербургъ, 1902, цѣна 3 рубля).—Մեսրոպ վարդապետ Տեր-Մովսեսեան, միաբան ս. էջմիածնի, Պատմութիւն ս. Գրոց հայկական բարգմանութեան (Ս. Պետերբուրգ, գինն է 3 ռուբլի):

10. *Г. Абухъ, Геологія армянскаго нагорья. Восточная часть. Орографическое и геологическое описаніе. Перев. Б. З. Коленко, маг. минерал. и геогнозіи* (Тифлисъ, 1903, стр. X+288, цѣна 3 рубля).—Հ. Աբիխ, Հայկական լեռների երկրաբանութիւնը: Թարգմանութեան մէջ վերաբնագրուած են գերմաներէն բնագրի վիճատիւ նկարները և գունատիւ քարտէզը: Հրատարակութիւնը կատարուած է Վայսերական Ռուսական Աշխարհագրական Ընկերութեան Կովկասեան մասնաճիւղի կողմից, որով պէտք է եզրակացնել որ Աբիխի մասնագիտական գրուածքը, որ լոյս է տեսել կէս դար առաջ (1849), այսօր էլ չի կորցրել իւր ուսումնական կարևորութիւնը և թարմութիւնը: Գիտութեանց բոլոր մասնաճիւղերը հէնց 19-րդ դարի երկրորդ կիսից յառաջագիմութեան հսկայական քայլեր են կատարել. երկրաբանութիւնը յետ չէ մնացել միւս ճիւղերից: Աբիխի աշխատութիւնը պահպանել է իւր կարևորութիւնը, որովհետև նրանից յետոյ չի գուրս եկել մի ուսումնական, որ իրան նուիրէր Հայաստանի երկրաբանութեան ուսումնասիրութեան այն չափերով և այնպիսի հմտութեամբ, ինչպէս Աբիխը: Նա Վայսերական Գիտութեանց ձեմարանի անդամն էր, իւր ուսումնասիրութիւնները կատարում էր ձեմարանից յանձնարարուած, բայց գրել և տպել է գերմաներէն:

11. *Извѣстія Кавказскаго Отдѣла Имп. Русск. Геогр. Общества*, томъ XV, 1902, № 5-й (и послѣдній). — Տեղեկատու Վայսեր. Ռուս. Աշխարհագրական Կովկասեան բաժնի:

Մեսրոպ Վարդապետ

